

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐՔԸ ԵՒ ՊԱՍԿՈՒԻԼԸ ՄԵՐ ՄԷՋ

Երեւան 16-ին Ապրիլի

Մօտ ժամանակներս լայն է տեսել և լրագիրներէ մէջ եւսանդագին յայտարարութիւններով հայ ժողովրդին է հրամցում իբրեւ ընթերցանութեան նիւթ մի գիրք, որի վերագիրն է «Իմ պատասխանը բարոյապէս ընկած և ամենքից արհամարուածին»։ Հեղինակը՝ պ. Լևոն Մելիք Ազամեանցը՝ 276 էջից կազմուած իր ստուար գիրքը լցրել է մի անօրինակ, գրական ասպարիզի վերայ դեռ չտեսուած և մարդուն սարսուռ ազդող հայհոյանքներով ու գուհիական յիշոցներով։ Նա նպատակ է ունեցել այդ միջոցով վրէժ հանել իր համագիւղացի պ. Ս. Քամալեանից, որի հետ անձնական թշնամութիւն ունի։ Գիրքը ամբողջովին ցեխ է և կարգաւ չի լինում, մի երկու տողից յետոյ ընթերցողը պատրաստ է գէն շարտել։ Այդ բանը զգացել է հեղինակը. ուստի յառաջաբանում գիմում է ընթերցողին յանուն «ազգի դոյութեան, ընդհանուր բարոյականութեան, հայ-ընտանիքի ու դպրոցի բարոյականութեան» և խնդրում է անպատճառ կաւդալ և, թէ զուրկ չէ բարոյականութեան զգացումից, իր ասելիքը ասել՝ սակայն այն պայմանով միայն, որ հաստատէ իր ասածները, խաչին գամէ այն մարդոց, որոց ինքը մի գլուխ հայհոյում է, և յարգանքի գլուխ լծեցնէ իրեն՝ իր այս մեծ քաջագործութեան համար. հակառակը պնդել և մտածել համարձակողներին սպառնում է մի շարք անյարմար անուններով*։ Սա-

* Գրական ապականութեան այս կոյտի հեղինակը մասամբ իւր սպառնալիքներով կարողացել է ապահովել իրեն. այս յօդուածը պ. Թադէոսեանի ասելով ուղարկուած է եղել նախ «Մշակ»-ի խմբագրութեան բայց հաւանօրէն «անյարմար անուններ» չստանալու եւ այս արտաքոյ կարգի «ցած ու ստոր դրչակից» գլուխներն ազատելու համար. չեն տպել։ Ուրիշ տեղեր էլ իրենց տարբեր մտածողների հասցէին շատ ազնիւ գոհարներ ունի շալլած. օր. եր. 122 «եթէ դաժնութիւն աղալիսին, անշուշտ դա պիտի լինի տխմարների տխմարը. անմիտների անմիտը եւ կամ Քամալեանց Ս-ի նման ալլանդակ բարոյականի տէր մի երկնատարի հրէշ»։ Ուրիշներից էլ լսել ենք. որ զարշանքով են կարդացել այդ ապականութիւնը. եւ կկամենային իրենց նողկանքը յատնել, բայց վախենում են «խելագարի» հետ գործ ունենալուց։

կայն հակառակ այս տարօրինակ հեղինակի աւելի քան օտարօտի պահանջն, համարձակում ենք մի երկու խօսք ասել նրա գրքի մասին, այն ևս, ոչ նրա ուղած ձևով: Եւ այդ ոչ թէ նրա համար, որ ապագայում նրանից անարդարացի վերաորանքներ կրելու հաճոյքն ունենանք, այլ որ անհրաժեշտութիւն է ներկայանում, ինքնին պահանջ է առաջ գալիս, որ մարդիկ խօսեն, խօսի և մամուլը, քննադատութիւնը,—և մէջ տեղից վերացնէ այն խայտառակ դրութիւնը, այն անպատուաբեր արարքը, որ Քամալեան—Բալասանեան—Մելիք Աղամեան trio-ն իրար նկատմամբ բռնել են և շարունակում են. որ վերանայ և չշարունակուի այն պատկիկային խայտառակ գրականութիւնը, որ նոյն այդ trio-ն մի ամբողջ տարի է ահա հրամցնում է ընթերցող դասակարգին լրագրների միջոցաւ և առանձին ըրօշկերներով*.

և վերջապէս նրա համար, որ օրինակը վարակիչ չլինի և ավելոյցիկեղութիւնների մէջ առանձին հաւնար ունեցողները գրական ասպարեղից դուրս մի այլ տեղ փորձեն իրենց ուժերը... և ոչ թէ պոռնոգրաֆիայով զբաղուեն, որպիսին ներկայացնում է պ. Մելիք Աղամեանի «Եւ պատասխանը»...

Պ. 1. Մ. Աղամեանը բարկացել է այն հանգամանքից, որ իր երբեմնի սրտակից բարեկամ, իսկ այժմ անձնական թշնամի Քամալեանը իր յօդուածներից մէկում պաշտպանելով իր գրքերի արժանիքը իր գրախօսին (պ. Բալասանեանին) պատասխանելիս, ասել է, թէ «խուլերի ճաշակը հաշուի չեմ առնում»: Պ. Մել. Աղամեանը ֆիզիկապէս իրօք խուլ է. ուստի այդ աննարկը իր վրայ ընդունելով, զայրանում է, (թէ 1) ինչո՞ւ Քամալեանը իր ֆիզիկական պակասութիւնը պախարակելի բան է համարում և 2) ինչո՞ւ իր «ճաշակը» չի հաւանում, քանի որ Քամալեանը իր ճաշակով է մարդ գարձել (էջ 178, 192, և 196): Սրանից զայրանալով, որ ոչ մի խելքը գլխին մարդ չէր անի,—պ. Մելիք Աղամեանը չի խնայում իր մարդ լինելը, չի խնայում և գրականութիւն, մամուլ, էտիկայ և այլն բաներ, և ամենալիտի խօսքերով շարունակ հայհոյում է իր թշնամուն: Եւ հայհոյում է անխնայ, ամեն քայլափոխում. իւրաքանչիւր տողի մէջ,

* Ս. Քամալեանից Ս.—Խոնու էր հերոտել. X հարուստը մախաթի ծակում, եւ Փորրոզի բարեկամներ. 1907 թիֆլիս.

Բ) Գրիգոր Բալասանեան — Հեռու փախիր գրական խուլիգանից, թիֆլիզ. 1907 թ.

Գ. Մ. Աղամեանի ներկայ գրախօսականի նիւթ Եղած դիրքը.

Դ) Շմկ.— X հարուստը կոպտաշտ եւ Մախաթի ծակում, թիֆլիս. 1908.

նոյն խի ամեն բառից յետոյ: Եւ ինչեւ ասէր, որ չէ ասում. «կրքոտ դրչակ», «անամօթ», «լիւր»՝ «անբարոյական ուսուցիչ», «գրական պոռնիկ», «խուլիգան», «էշ», «քոսոտ շուն», «գոմշի թրիք», «անաբուռ», «աննամուս», «լիտի», «լպիրշ», «արուա-գէտ», «անարդ արարած», «սխալմամբ մարդ կոչուած», «բա-րոյապէս ընկած», «ամենքից արհամարուած», և այլն, և այլն... կատարեալ ցեխ, մի խոշոր տպականութիւն, որ կրքից կուրա-ցած հեղինակը ուզում է շարտել իր անձնական թշնամու վրայ, բայց չի զգում, որ շարտելու համար իր ձեռքն է վերցնում այդ ամբողջ տպականութիւնը, իր բերանից են դուրս գալիս այդ ընտիր մարդարիտները, և որ դորանով ինքնէլ իր ամբողջ էութեամբ արդէն այդ տպականութեան մէջ թաւալում է:

276 երես Շարունակ հայհոյելու համար մի տարօրինակ ե-ռանդ է հարկաւոր, որի տէրը դժուար թէ հոգու ընական վի-ճակ ունենայ: Որպէս զի միայն հայհոյելու համար խօսելու նիւթ ունենայ պ. Մել. Ադ. դիմումէ մի կողմից ծիծաղելի, միւս կողմից աններելի միջոցներէ: Այդպէս օրինակ նա պատ-մում է իր աշակերտական—ընկերական կեանքից մի գէպը. և իր թշնամու (Քամ.) հետ պատահած վաղեմի այդ մի չնչին դէպքի պատճառով 15—26 երես շարունակ հայհոյում է: Շատ ընորոշ է այդ կտորը: Դա ցոյցէ տալիս ոչ միայն այն, որ հեղինակը կա-տաղի բնաւորութեան տէր և բժականդիր մարդ է, այլ և զուար-ճալի է այն ծիծաղելի եղբակացութեամբ, որ իբր թէ ինքը ուղե-ցել է, դեռ հաղիւ ներս. Դպի գ. գաս. աշակերտ, իրենց գիւղի համար լաւ քահանայութեան դատարարակել Քամ. ին:

Եւ այսպիսի տեղեր շատ կան, ուր կարեւորը ոչ այնքան նիւթն է, որքան այն որ նիւթի առիթով հնարաւորութիւն է գտնում իր թշնամուն մի գլուխ հայհոյելու, որ սիրաւ հովանայ: Ճնշում գործ գնելով 26-ը վրայ, կարգում էք այդ՝ ամբողջովին հայհոյանքից, ցեխից, կազմուած գիրքը և գալիս էք այն եղբա-կացութեան, որ պ. Մել. Ադ. հայհոյելու և յականէ յանուանէ վիրաւորելու մի առանձին հիւանդութիւն ունի: Նա պիտի հայ-հոյի այն բոլոր մարդոց, որոց ինքը ճանաչում է, կամ որոց հետ երբ և իցէ հաշիւ է ունեցել, չնայած որ այդ մարդիկ ոչ մի կապ չունին՝ Քամալեանից վիրաւորուած լինելու իր խնդրի հետ: Այդպիսի տեղերից է Սահակ քհ. Սահակեանի մասին պատմածը (38—42 էջ). որ իբր. թէ մի օր Սհ. քհ. հիւանդացած ժամա-նակը օգնել է նրան, բայց նա առողջանալուց յետոյ, երբ «ոչ-բարով աստուածաբանութիւն սովորած, Թիփլիզի յայտնի եկե-ղեցիներից մէկում հազարներ ստացող միաբան էր, այնպիսի

ստորութիւններ արաւ, այնպիսի տգեղ դեր ստանձնեց իմ վերաբերմամբ, այնպիսի անազնութիւն, այնպիսի երախտամոռութիւն արաւ, որին կարող եր նախանձեղ անպիտան ու անազնիւ Քամալեանցը» (էջ 40): Իսկ թէ ի՞նչէ արել իրօք Ս. քհ.Ն այդ չի յայտնում և չի ասում ոչ մի անգ: Պ. Մել. Ադ. այնքան բժականդիւ է, որ մի «և»-ի համար երեսներ է նուիրում, որպէս զի փաստացի խօսած լինի. իսկ Ս. քհ.-ի համար ոչինչ չի յիշում: Եւ դալիս էք այն եզրակացութեան որ այդ բժականդիւ զրաբանը կամ շօշափելի բան չունի յիշելու, կամ եթէ ունի էլ, այնպիսի բան է, որ եթէ յիշի, գուցէ իր ասածի հակառակը կապացուցի: Եւ այդ առանց փաստի մեղադրանքների համար, առանց լաղճի խայթ դգալու, անգուռն բերանով հայհոյող մարդը խեղճ Ս. քհ.-ին յանիրաւի մի շարք լիտի և կեղտոտ ածականներ է տալիս: Ընթերցողի համար պարզուամէ մի տխուր հանգամանք, այն, որ այդ անտեղի վերաւորանքը Ս. քհ.-ի հասցէին գրել է միայն նրա համար, որպէս զի մի կերպ դրա հետ կապի Քամալեանի աւուր եւ այդպիսով Քամ. ին վերաւորած լինի: Ուրիշ եզրակացութիւն հանել դժուար է այս անփաստ կտորից, քանի որ հեղինակը այնքան շատ բժականդիւ և փաստասէր է: Իսկ այս արդէն անցումալուրճեան նշանէ: Միթէ՞ կարելի է դէպի Քամ. ունեցած կրքից այնքան կուրանալ, որ առանց շօշափելի փաստի մարդ ցեւալարի մի քահանայի վրայ, որին թէ Թիփլիզում և թէ դուրսը ճանաչում են իբրեւ ըստ ամենայնի լաւ և զարգացած մարդ: Երկար տարիների ուսուցիչ և քահանայ լինելով, Ս. քհ.-ն ունի մի շարք աշակերտներ և համակրողներ, որոնց համար օտարօտի է և անհասկանալի նորա հասցէին շուայլած հեղանակի անշուր հայհոյանքները: Իսկ թէ իրօք կրթուած քահանայ լինելու համար յարգուում է ծխականներից և լաւ վարձատրուում, կամ եկեղեցու ծուխը իբրեւ կրթուածի հաղարներ է տալիս, այդտեղ քահանան ինչո՞վ է մեղաւոր, որ նրան զանազան անուններով պ. Մել. Ադ.-ը հայհոյի: Ընդհակառակը այդ առթիւ միայն պիտի ուրախանար «հասարակական գործիչը» և «ժողովրդի շահերից» խօսողը, իչպէս պ. Մել. Ադ.-է իրեն անուանում: Ինչ վերաբերում է Ս. քհ.-ի աստուածաբան լինելու ծաղրին (որ յամենեան դէպս պ. Մել. Ադ.-ին անձնապէս չի վնասում) այդտեղ արդէն առողջ դատողութիւն ունեցող մարդիկ լուում են... Թէ իրօք Ս. քհ.-ն աստուածաբան է (այս բառի ոչ ամբողջական, այլ լաւ մտքով) այդ երևում է նրա ուրուի կերպով կազմած մի շարք դատադրքերից: Սակայն օգտուելով ամբողջական տրամադրութիւնից, կախում է «աստուածաբան» բառից և

շարունակ հայհոյում այն տրամաբանութեամբ միայն, որ իր անձնական թշնամի Գամօ-ը նոյնպէս աստուածարանութիւն ուղորելու արասն է ունեցել: Այսպիսով թշնամուն անյատակ հայհոյելու միջոց ունենալու համար պ. Մել. Ադ. անարդարացի կերպով մէջ է բերում իր խնդրի հետ կապ չունեցող կողմնակի անձանց և առանց փաստի նրանց էլ հայհոյում է: Այսչափ էլ մարդ կուրացած և տարուած կլինե՞ր կրքեց... Այս ինչ հակայական չափի կիրք է, որ խելակորոյս գրութեան է հասցրել հեղինակին: Գրքի սկզբից մինչև վերջը կրքեց կուրացած, չի բաւականանում անասելի հայհոյանքներ տալուց, այլ և շարունակ թքում է... և այնչափ շատ է թքում, որ կարծէք թքարան լինի: Ձբաւականանալով գորանով կիրքը այնտեղ է հասցնում պ Վ. Մել. Ադ.-ին, որ ուզում է իր թշնամուն «աչքի տակից արիկ հանել»: Մարդ մնում է շեւարած, թէ այսչափ կրքի տէրը կարճ է խելացի վայրկաններ ունենալ: Նահատակելով Ձեզ, կարգում էք մի կերպ այդ մեծ աղբակոյտը, աչքի էք անցնում այս հսկայ 276 երեսանոց անկապ ցնդարանութիւնների ժողովածուն, տեսնելու թէ ո՞ր կհասնի սրա վերջը, և գալիս էք այն եզրակացութեան, թէ գործ ունիւր իրօք ցնորված մի «պասկվիլեանաի» հետ և Ձեր առաջ ընկած է «խելագարի յիշատակարանը»... Ընթերցողի մաքով ակամայ այն միտքն է անցնում, թէ այս գրքի հեղինակի տեղը գուցէ գժանոյն է, բայց ոչ գրական ասպարէզը:

Յովհաննէս Թադէոսեան

1. Начальная Русская хрестоматія для Армянъ. 1-ая книжка դաստանդութեան բացատրութիւններով. աշխ. Սեդրաք Մանգինեան, Թիֆլիզ. 1907, Հրատ. Գուտենբերգի. Գինն է 55 կ.

2. Նոյնը 2-ая книжка, Թիֆլիս, 1907 Հրատ. Բազումայ Հայոց կուլտուրական միութեան. Գինն է 75 կ.

Ռուսաց լեզուի այս երկու դասագրքերն էլ նորութիւն են մեր մանկավարժական աշխարհում: Պարոն Ս. Մանգինեանցը, մեր մանկավարժութեան հիմնադիրներից մէկը, այս դասագրքերով լրացնում է այն մեծ պահասը, որ դարձի է եղել իւրաքանչիւր փոքր ի շատէ բարեխիղճ և իւր կոչումն ըմբռնող ուսուցչի համար: Հայ դպրոցներին մինչև այժմ պակասում էր ռուսաց լեզուի դաստանդութեան մի ձեռնարկ, որ համապատասխան լինէր մանկավարժական տարրական պահանջներին: Հայ դպրոցները ողողել են մեր մանուկների զարգացման համար անհամապատասխան ռուսաց դպրոցների կամ միջադ-